ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2017թ. թիվ 35-Ա

ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 41 հոդվածով, 42 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի զ/ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Գեոդեզիայի և հողային պետական տեսչության» կողմից կազմված 06.09.2016թ. թիվ 06 ակտը և «Գեոդեզիայի և հողային պետական տեսչության» պետի 05.10.2016թ. թիվ 06 որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Կուրթան համայնքի ղեկավար Միեր Գևորգյանին նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

2. Տուգանքն անձնական միջոցներից 15-օրյա ժամկետում մուծել պետական բյուջեի 900005243119 հաշվեհամարին:

3. Տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում այն կիրականացվի օրենքով սահմանված կարգով:

4. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ս.Մակարյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի համաձայն սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել Կուրթան համայնքի ղեկավար Միեր Գևորգյանին պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. հունվարի 27
ք.Վանաձոր